

<< Հույս և օգնություն >> հասարակական կազմակերպության տարեկան գործունեության հաշվետվություն

Կազմակերպության՝ լրիվ անվանումը	Հույս և օգնություն ՀԿ
Պետական գրանցման համարը	211.171.02641
տարին, ամիսը, ամսաթիվը	21.05.2004
ՀՎՀՀ	.01222591
Գտնվելու վայրը	Ֆուչիկի 32
Հեռախոսահամարներ	(+374)91223950, (+374)10531770
Էլեկտրոնային փոստը	hopeandhelp.ngo@gmail.com
պաշտոնական ինտերնետային կայքը	hopehelp.am
Գործադիր մարմնի ղեկավարի անունը և պաշտոնը,	Նախագահ՝ Ենոք Շատվորյան
Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակները,	<p>Կազմակերպության գործունեության նպատակն է՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ աջակցել դժվար իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին, ինչպես նաև օտարերկրացի և քաղաքացիություն չունեցող անձանց:</p> <p>Կազմակերպության առարկան և խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • նպաստել ՀՀ բնակչության առողջության պահպանմանը, վարակային հիվանդությունների այդ թվում ՍՎ-ի ու ԶԻԱՀ-ի կանխարգելման՝ իրազեկության բարձրացման, ուսուցման, բժշկական, իրավաբանական, հոգեբանական խորհրդատվության, նյութական, բարոյական աջակցության ցուցաբերելու միջոցով: • նպաստել մարդկանց թրաֆիքինգից կամ շահագործումից տուժածներին հասարակության մեջ ինտեգրմանը՝ ժամանակավոր ապաստան, խորհրդատվություն, իրավական, հոգեբանական, բժշկական աջակցություն, մասնագիտական ուսուցում և ուղղակի նյութական աջակցություն ցուցաբերելու միջոցով: • նպաստել երիտասարդության շահերի պաշտպանությանը, խթանել նրանց ինքնագիտակցության զարգացմանը, վերհանել երիտասարդության խնդիրները, գտնել դրանց

	<p>լուծման ուղիները. օգնել կայանալ հասարակական գործունեության ոլորտում:</p> <ul style="list-style-type: none"> • Նպաստել սեռական բռնության ենթարկված անձանց, այդ թվում երեխաների իրավական պաշտպանությանը, հոգեբանական և սոցիալական վերականգնմանը, • Նպաստել միգրացիոն գործընթացների հետ կապված քաղաքացիների իրավունքների և պարտականությունների արդյունավետ իրագործմանը, միջպետական համագործակցության զարգացմանը: • Նպաստել ՀՀ քաղաքացի միգրանտների ինտեգրմանը միջազգային աշխատաշուկա՝ գտնվելու երկրների օրենքների, մշակույթի, պատմության, ավանդույթների և ապրելակերպի հետ ծանոթանալու միջոցով, օրինական շահերի պաշտպանության իրականացմանը՝ իրավական, հոգեբանական, սոցիալական աջակցության տրամադրման միջոցով, հայրենիք կամավոր վերադարձի և վերաինտեգրմանը: • ՀՀ քաղաքացի միգրանտներին աջակցության տրամադրել Հայաստանում և Հայաստանից դուրս: • Նպաստել ՀՀ օրենսդրության կատարելագործմանը <ul style="list-style-type: none"> • ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հրատարակչական գործունեություն; • Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:
<p>Կազմակերպության անդամների թիվը (հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)</p>	<p>21</p>
<p>Կամավորների թիվը, որոնց աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը (հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ),</p>	<p>0</p>
<p>Հաշվետու տարվա ընթացքում ժողովի իրականացված նիստերի քանակը</p>	<p>2</p>
<p>Հաշվետու տարվա ընթացքում ոչ հանրային միջոցներից իրականացված ծրագրերի անվանումը և համառոտ նկարագրությունը (վայր, նպատակ, կարգավիճակ, արդյունք)</p>	<p><< Սեռական բռնության ենթարկված աղջիկների, մարդկանց շահագործման զոհերի և թրաֆիքինգի ենթարկվածների համար սոցիալ-հոգեբանական վերականգնման միջոցառումներ>></p>

դրամաշաշնորհային ծրագիրը իրականացվում է Երևանում, ընթացքի մեջ է: Ֆինանսավորող աղբյուրը Ամերիկայի կառավարությունն է: Ծրագրի իրականացման տևողությունն է 01.06.2019թ - 29.02.2020թ :

Ծրագրի նպատակն է 1) Թեժ գծով կամ այլ աղբյուրներով թրաֆիքինգի, բռնության (ներառյալ՝ սեռական բռնության) հավանական զոհերի վերաբերյալ տեղեկատվության ստացում, վտանգի աստիճանի վերլուծություն, գնահատում և զոհերի բացահայտում/ուղղորդում,

2) ընտանիքի անդամների կամ այլ անձանց կողմից բռնության (ներառյալ՝ սեռական բռնության) ենթարկված կանանց և աղջիկների մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ դառնալու կամ արդեն զոհ ճանաչված անձանց կրկնազոհացման վտանգի կանխարգելում,

3) բռնության (ներառյալ՝ սեռական բռնության) ենթարկված կանանց և աղջիկներին օժանդակության ցուցաբերում, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ/կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց աջակցություն, նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների կազմակերպում:

31.12.2019թ -ի դրությամբ իրականացված ծրագրի արդյունքներն են՝

երկու շահառու ստացել է նախնական մասնագիտական կրթություն, կրթաթոշակ և տրանսպորտային ծախսերի համար նախատեսված գումար: Դասընթացները ավարտելուն պես շահառուների համար գնվել են համապատասխան մասնագիտական գործիքներ:

Ծրագրում ներգրավված շահառուները ստացել են բնաիրային աջակցություն:

Թեժ գծի գործունեության շնորհիվ պահվել է կապը նույնացված շահառուների հետ, թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկային խմբում գտնվող անձանց հետ, խորհրդատվություն է տրամադրվել ազգաբնակչությանը հավանական թրաֆիքինգի դեպքերի, աշխատանքային միգրացիայի և այլ թեմաներով:

<p>Դրամական մուտքեր ոչ հանրային միջոցներից/դրամաշնորհ</p>	<p>8167409.40 ՀՀ դրամ</p>
<p>Դրամական ելքեր ոչ հանրային միջոցներից/դրամաշնորհ</p>	<p>8132938.90 ՀՀ դրամ</p>
<p>հանրային դրամական միջոցներով իրականացվող ծրագրի անվանումն ու վայրը, ծրագրի կարգավիճակը (ավարտված կամ ընթացքի մեջ) և տեղեկատվություն դրանց մասին (նպատակ, հիմնական արդյունքներ)</p>	<p><< Սեռական բռնության ենթարկված աղջիկների, մարդկանց շահագործման զոհերի և թրաֆիքինգի ենթարկվածների համար սոցիալ-հոգեբանական վերականգնման միջոցառումներ>> ծրագիրը իրականացվել է Երևանում, ընթացքի մեջ է: Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է : Ծրագիրը ավարտված է :</p> <p>Ծրագրի նպատակն է 1) Թեժ գծով կամ այլ աղբյուրներով թրաֆիքինգի, բռնության (ներառյալ՝ սեռական բռնության) հավանական զոհերի վերաբերյալ տեղեկատվության ստացում, վտանգի աստիճանի վերլուծություն, գնահատում և զոհերի բացահայտում/ուղղորդում,</p> <p>2) ընտանիքի անդամների կամ այլ անձանց կողմից բռնության (ներառյալ՝ սեռական բռնության) ենթարկված կանանց և աղջիկների մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ դառնալու կամ արդեն զոհ ճանաչված անձանց կրկնազոհացման վտանգի կանխարգելում,</p> <p>3) բռնության (ներառյալ՝ սեռական բռնության) ենթարկված կանանց և աղջիկներին օժանդակության ցուցաբերում, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ/կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց աջակցություն, նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների կազմակերպում:</p> <p>Ծրագրի իրականացման տևողությունն էր 01.05.2019թ - 31.12.2019 թ: 31.12.2019թ -ի դրությամբ իրականացված ծրագրի արդյունքներն են՝</p> <p>Ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 2 շահառու, որոնք նույնականացվել են Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից: Շահառուները ստացել են ծրագրով նախատեսված սոցիալ-հոգեբանական</p>

	<p>աջակցություն՝ կացարանի տրամադրում, բնափրային օգնություն, անհրաժեշտ փաստաթղթերի վերականգնում, շահառուն և ընտանիքի անդամները ստացել են հոգեբանական, սոցիալ - մանկավարժական աջակցություն, իրավաբանական օգնություն:</p> <p>Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երկու շահառուներն էլ ստացել են բժշկական/նեղ մասնագիտական աջակցություն: Շահագործման ընթացքում ձեռքի վնասվածքը շտկելու նպատակով շահառուն անցել է պլաստիկ վերականգնողական վիրահատություն:</p> <p>Մյուս շահառուն բժշկական կենտրոններից մեկում անցել է նեղ մասնագիտական հետազոտություն և ստացել համապատասխան բուժում: Ապահովվել են մասնագիտական կրթությամբ և մասնագիտական գործիքներով, փոխհատուցվել են շահառուների տրանսպորտային ծախսերը)</p>
<p>Հանրային դրամական միջոցների տարեկան մուտքեր</p>	<p>8296658 ՀՀ դրամ</p>
<p>Հանրային դրամական միջոցների տարեկան ելքեր</p>	<p>8296658 ՀՀ դրամ</p>
<p>Տարեկան դրամական մուտքերի գումարը դրամաշնորհների գծով</p>	<p>16464067,40 ՀՀ դրամ</p>
<p>Օգտագործված դրամական միջոցները դրամաշնորհների գծով</p>	<p>16429596,90 ՀՀ դրամ</p>
<p>Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և դրա</p>	<p>Ստացվել է եկամուտ հիմնական միջոցի՝ տրանսպորտային միջոցի վաճառքից՝ 550000 ՀՀ դրամ, Հաշվարկվել է 110000 ՀՀ դրամ շահութահարկ :</p>

արդյունքում ստացված շահույթի օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը:	181830 ՀՀ դրամ ծախսվել է կազմակերպության վարչական ծախսերի վրա: Հաշվետու տարվա վերջում գուտ շահույթը կազմել է 258170 ՀՀ դրամ,որը փոխանցվել է հաջորդ տարի ' 2020թ:
Ընդամենը դրամական միջոցների մուտքեր հաշվետու տարվա ընթացքում	17014067.40
Ընդամենը դրամական միջոցների ելքեր հաշվետու տարվա ընթացքում	16647122.90